

Ռուսերն են ծնւմն էմ, այնքան մարդիկ բարեկիրք են



Մ

ի առավոտ մըտ-
նում եմ գրա-
սենյակ, տես-

նեմ՝ մեր հաշվապահ միսիս Հիլպին վերարկուն հագնում է, գլխարկը դնում, իսկ աչքերից արցունք է հոսում:

Ապրիլ ամիսն էր, և ի՛նչ անենք, որ ես եղած-չեղած՝ մի ինչ-որ գարշելի թաղման բյուրոյում չնչին գրասենյակային աշխատող էի: Մի՞թե ես չունեի նոր գլխարկ ու նոր կոշիկ-ներ: Մի՞թե Հարավային խաղաղ-օվկիանոսյան ընկերությու-նը շաբաթ օրերը էժանացրած տարիֆով հատուկ գնացքներ չի ուղարկում Մոստերեյ: Եւ մի՞թե ես չեմ պատրաստվում վաղը գնալ Մոստերեյ, ծովափ:

Շաբաթ օրը կաշխատեմ մինչև կեսօր, մտածում էի ես, Ջարլիի կաֆեում մի հիանալի շնիցել կուլ կտամ տասնհինգ սենթով, հետո շտապ կգնամ հարավային խաղաղ-օվկիա-նոսյան կայարան, հատուկ տոնական տոմս կգնեմ Մոստերեյ գնալ-գալու համար, գնացք կնստեմ և շաբաթ օրվա կեսից մինչև երկուշաբթի առավոտը ազատ կլինեմ թոշունի պես: Մի նկարազարդ ժուռնալ կգնեմ և մինչև Մոստերեյ ամբողջ ճանապարհին պատմվածքներ կկարդամ:

Բայց ահա, մտնում եմ գրասենյակ, իսկ մեր հաշվապահ

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— դուցե դուք գրկվե՞լ եք ձեր տեղից, հա՛:

— Ես ինքս եմ դիմել հեռանալու համար,— ասաց նա:

— Ճշմարիտ չէ,— ասացի ես:— Դուք չեք դիմել: Ես երեխա չեմ: Ինձ չեք խաբի:

Միսիս Հիլպլիի ոտճիկը շաբաթական քսանյոթ դոլլար և հիսուն սենթ էր: Առաջ, երբ նա նոր էր ծառայության մտել թաղման բյուրոյում, նրան վճարելիս են եղել ութ դոլլար: Ինձ արդեն սովորեցրել էին նրա աշխատանքը կատարել, և իմ ոտճիկը շաբաթական տասնհինգ դոլլար էր, դրա համար նրանք վճարել էին պառավ լեդիին: Իհարկե, ես շատ գոհ էի, որ աշխատանք ունեմ. ես պատրաստվում էի գնալու Մոնտե-րեյ և երեք դոլլարանոց նոր կոշիկներով ու նոր գլխարկով ինձ հիանալի էի զգում, բայց ամենեկին սրտովս չէր, որ իմ պատճառով լաց լինի միսիս Հիլպլին, այն էլ այդ տարիքին:

— Միսիս Հիլպլի,— ասացի:— Ես որոշել եմ այսօրվանից թողնել իմ ծառայությունը և այդպես էլ կանեմ: Ես մի քեռի ունեմ Պորտլանդում, նա նպարեղենի խանութ է բաց անում, և ես զնալու եմ նրա մոտ՝ նրա հաշիվները պահելու: Ես մտադիր չեմ ամբողջ կյանքումս աշխատել մի ինչ-որ թաղման բյուրոյում: Գնում եմ:

— Զո՛, — ասաց միսիս Հիլպլին,— դուք հիանալի գիտեք, որ Պորտլանդում ոչ մի քեռի էլ չունեք:

— Մի՞թե,— ասացի:— Քի՞չ տեղ կարող եմ քեռիներ ունենալ ես. դուք հո չեք կարող բոլորին իմանալ: Ո՛չ, այս ծառայությանը ես վերջ եմ տալիս: Հետեւի հասցեներին, թե որտեղ է որեւէ մեկը մեռե՞լ: Ի՛նչ խոսք, շա՛տ հիանալի աշխատանք է մի երիտասարդ տղայի համար:

— Զո՛, — ասաց միսիս Հիլպլին,— եթե դուք այս աշխատանքը թողնեք, ես այլևս երբեք չեմ խոսի ձեզ հետ:

— Շա՛տ պետքս է աշխատել թաղման բյուրոյում,— ասացի ես:— Հանուն ինչի՞ ես պիտի հետեւեմ ինչ-որ հանգուցյալներին:

— Դուք բարեկամներ չունեք այս քաղաքում, Զո՛,— ասաց միսիս Հիլպլին:— Զե՛ որ դուք ամեն ինչ պատմել եք

միսիս Հիլպլին հագնում է իր վերարկուն, ծածկում է գրկ-
խարկը, իսկ աչքերից արցունք է հոսում:

Ես դադարեցի սուպել և շուրջս նայեցի: Ամեն ինչ լուռ էր:
Միստր Ուայլիի առանձնասենյակի դուռը կիսաբաց էր, այն-
պես որ պետք էր կարծել, որ նա արգեն եկել է: Գրասենյա-
կում ուրիշ ոչ ոք չկար: Ժամը ութն անց էր քսան րոպե, և
լավում էր, թե ինչպես բարձր թիկ-թակ է անում ժամացույ-
ցը, որի ձայնը սովորաբար մարդ չի նկատում:

— Բարի լույս, միսիս Հիլպլի,— ասացի ես:

— Բարի լույս, Ջոն,— ասաց նա:

Ես շմոտեցա իմ փոքրիկ պահարանին՝ գլխարկս կախելու
և սեղանիս մոտ դնալու, որովհետև զգում էի, որ այստեղ
մի ինչ-որ վատ բան է պատահել: Ինձ թվում էր, որ անբա-
ղաքավարություն կլինի գլխարկս կախել ու նստել սեղանիս
մոտ, առանց նախապես իմանալու, թե ինչ է պատահել և ին-
չու է միսիս Հիլպլին վերարկուն հագնում, գլխարկը ծած-
կում ու լաց լինում: Միսիս Հիլպլին պառավ կին էր, նա
բեղեր ուներ, խիստ կուզիկացի էր, նրա ձեռքերը շոր էին,
կնճռապատ, և ոչ ոքի նա դուր չէր գալիս, բայց չէ՞ որ ապ-
րիլ ամիսն էր, իսկ ես ունեի նոր գլխարկ և նոր կոշիկներ,
և չէ՞ որ ես միսիս Հիլպլիի հետ միևնույն գրասենյակում
աշխատել էի դեռ սեպտեմբեր ամսից, աճյալ ձմեռը, և շեմ
ասի թե նրան սիրում էի, ես նրա համար չէի խելագարվում,
բայց նա բարեսիրտ պառավ էր, և ես չէի կարող այնպես
հեշտություն մը դնալ գլխարկս կախել և իմ աշխատանքային
օրն սկսել, որպես թե ոչինչ չի եղել:

Ես պետք է նախ խոսեի նրա հետ:

— Միսիս Հիլպլի,— ասացի,— որեւէ բան է պատահել:

Նա գլխով ցույց տվեց միստր Ուայլիի առանձնասենյա-
կի կիսաբաց դուռը և նշան արեց, որ ես չխոսեմ, այլ պար-
զապես դնամ գլխարկս կախեմ ու գործի անցնեմ:

«Հասկանում եմ,— մտածեցի ես— Դիրեկտորը նրան
վռնդել է»:

Այսբան տարվա աշխատանքից հետո:

կրավականացներ, որ ընդամենը մի կես տարվա ընթացքում
զննեմ այն ամենը, ինչ երազել էի իմ ամբողջ կյանքում: Տե՛ր իմ
աստված, այդպիսի փողով ես հո շատ շուտով կկարողանայի
«Հարկեյ-Դեվիդսոն» մոտոցիկլետ գնել:

— Ո՛չ, — ասացի: — Ես հեռանում եմ:

— Ինչո՞ւ եք հեռանում, — հարցրեց նա: — Ես կարծում էի
ձեզ դուր է գալիս ձեր աշխատանքը:

— Կար ժամանակ, — ասացի, — երբ դուր էր գալիս, իսկ
հիմա՝ ոչ: Միստր Ուայլի, — ավելացրի ես, — մի՞թե դուք
դուրս եք արել միսիս Հիլպլիին:

Միստր Ուայլին ետ ընկավ բազկաթոռում և ինձ նայեց:
Նա վերադարձած էր: Ո՞վ եմ ես, որ այդպիսի հարցեր ասեմ
նրան:

— Երիտասարդ, — ասաց նա, — ձեր վերջնահաշվի չեկը
կգրվի հենց այս առավոտ: Կարող եք մի ժամից հետո գալ
ստանալու:

Այստեղ ե՛ս էլ նեղացա:

— Ես ուզում եմ անհապաղ ստանալ իմ վերջնահաշի-
վը, — ասացի:

— Այդ դեպքում սպասեցեք միջանցքում: Միջնորմի մյուս
կողմը:

Ես դուրս եկա գրասենյակ, միջնորմի հետևը և հենվեցի
բարյերին: Միսիս Հիլպլին խիստ հուզված էր:

— Ես հեռանում եմ, — ասացի:

Նա ոչ մի խոսք չկարողացավ արտասանել:

— Նա ուզում էր ինձ շաբաթական երեսուն դոլար
սալ, — ասացի, — բայց ես հեռանում եմ:

Նա լուռ կանգնած՝ միայն օդ էր կուլ տալիս:

— Միսիս Հիլպլի, — ասացի ես, — նրանք ստիպված կլի-
նեն նորից ձեզ ծառայություն ընդունել, որովհետև այժմ չկա
մեկը, որ ձեր գործն անի:

— Զո՛ւ, — ասաց նա, — դուք ինձ խիստ վշտացնում եք:

— Ոչինչ, ամեն ինչ կանցնի, — ասացի, — որտեղ ես ծըն-
վել եմ, այնտեղ ընդունված չէ աշխատանք խլել կնոջից: Զե՛

ինձ, թե որտեղ եք ծնվել և ինչ եք անում այստեղ, Ծրիսկոյում,¹ և ես շատ լավ եմ հասկանում: Ձեզ այս ծառայութեանը հարկավոր է, և եթե հեռանաք, ինձ խիստ վիրավորած կլինեք:

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում: Գամ այստեղ և գրավեմ ձեր տե՞ղը: Դա անարդար բան կլինի: Դուք այստեղ ծառայում եք քսան տարի կամ գուցե և ավելի:

— Ջո՛ւ,— ասաց միսիս Հիլպլին,— գնացեք կախեցեք ձեր գլխարկը և գործի անցեք:

— Ոչ,— ասացի:— Ես հենց հիմա թողնում եմ իմ ծառայութիւնը:

Եւ գնացի ուղիղ միստր Ուայլիի առանձնասենյակը: Միստրը Ուայլին թաղման ընկերութեան փոխնախագահն էր: Այնպես էլի՛, քթի ծայրը տափակ մի ծերուկ էր, երկարահասակ, մտացրիվ և կաթնայանման գլխարկ էր ծածկում: Սոսկալի ժլատի մեկն էր:

— Ի՞նչ կա,— հարցրեց նա:

— Հեռանում եմ ձեզանից,— ասացի:

— Այդ ինչո՞ւ այդպիս հանկարծ,— ասաց:

— Քիչ եք վճարում,— ասացի:

— Որքա՞ն եք ուզում,— ասաց նա:

Ա՛յ թե զարմացա ես: Ախր ես կարծում էի, թե նա խուլն կվռնդի ինձ: Եւ ահա ես տեղն ու տեղը մտածեցի շատ պահանջել, որպեսզի նա անպայման դուրս անի ինձ:

— Շաբաթական երեսուն դոլլար,— ասացի ես:

— Բայց չէ՞ որ դուք դեռ ընդամենը տասնութ տարեկան եք,— ասաց նա:— Այդպիսի բարձր ոտճիկը մի քիչ վաղածամ է: Ի դեպ, մենք կփորձենք կարգավորել այդ գործը:

Ա՛յ քեզ սատանայական բա՛ն: Եթե առաջ որևէ ժամանակ ես ուղեկցուի այդպիսի մի բանի հասնել և ավելի շատ փող ստանալ, հավանորեն դրանից բան չէր դուրս գա: Իսկ հիմա հանկարծ՝ ինդրե՛մ: Շաբաթական երեսուն դոլլարը ինձ

¹ Պրիսկո — Սան-Ֆրանցիսկոյի խոսակցական անունը:

— Գուք իրավունք չունեք ինձ անբարեկիրթ կոչելու,—
ասացի ես:— Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ պար-
կեշտ են:

Զիկագոյում, իհարկե, բոլորը չեն պարկեշտ: Նայած որ
շրջանում, այնտեղ, որտեղ ես էի ապրում, մարդիկ իրենց
քաղաքավարի էին պահում: Ո՛չ միշտ, իհարկե, բայց ե այն-
պես: Եվ ես բարկացա:

— Իրավունք չունեք ասելու, թե ես ինձ անքաղաքավարի
եմ պահում,— ասացի ես:

— Իսկ որտե՞ղ եք ծնվել դուք,— հարցրեց միստր
Ուայլին:

— Զիկագոյում,— ասացի:— Իբր թե չգիտե՞ք:

— Ոչ,— ասաց նա:

— Ես այնտեղ աշխատել եմ Հաբավային լճակների
մոտ,— ասացի:

— Դե լավ,— ասաց միստր Ուայլին,— դուք գեռ շատ
բան ունեք սովորելու: Եվ ահա իմ խորհուրդը, չարժե կծել
այն ձեռքը, որ կերակրում է ձեզ: Ձեռնառու բան չէ դա:

— Ես ոչ մի ձեռք չեմ կծել,— ասացի:

— Գուք հեռանում եք մեղա՞նից, չէ՞,— ասաց նա:

— Այո, սըր,— ասացի,— ճշմարիտ է, հեռանում եմ:
Բայց ես ոչ ոքի չեմ կծել:

— Լավ, էլ ի՞նչ եք ուզում:

— Ես պարզապես ներս մտա հրաժեշտ տալու,— ասա-
ցի:— Ես պարզապես ուզում էի, որ դուք իմանաք. ես միտն-
դամայն քաղաքավարի եմ:

— Լավ,— ասաց միստր Ուայլին:— Բարի ճանապարհ:

— Մնաք բարով,— ասացի ես:

Ապա դուրս եկա առանձնասենյակից և սկսեցի հրաժեշտ
տալ միսիս Հիլպլին: Մինչ ես խոսում էի նրա հետ, առանձ-
նասենյակից դուրս եկավ միստր Ուայլին: Միսիս Հիլպլին
խիստ հուզվեց, երբ միստր Ուայլին երեսաց գրասենյակում,
բայց ես չղաղարեցի խոսել:

— Միսիս Հիլպլի,— ասացի,— ես իմ ամբողջ կյանքում
երազել եմ զննել մի «Հարբեյ-Դեվիդսոն» ու ման գալ զանազան

որ ես Չիկագոյից եմ և միշտ էլ կարող եմ վերադառնալ
այնտեղ:

(Վերադառնալ Չիկագո: Այդ էր պակաս: Ես սիրում եմ
Կալիֆորնիան: Ես միշտ սիրել եմ Կալիֆորնիան: Բայց հենց
այնպես ասացի):

— Զո՛ւ, — ասաց միսիս Հիլպլին, — իսկ ի՞նչ կլինի, եթե
դուք ուրիշ գործ չճարեք:

Ես մատներս շխկացրի:

— Է՛, աշխատանք միշտ կգտնվի, — ասացի:

Այդ ժամանակ առանձնասենյակի դռան մեջ երևաց միս-
տրր Ուայլին և գլխով արեց միսիս Հիլպլին: Վերջինս մտավ
առանձնասենյակ, և միատր Ուայլին դուռը ծածկեց: Միսիս
Հիլպլին այնտեղից դուրս եկավ միայն ժամը խնդի տասներ-
հինգ պակաս: Նա գլխարկն ու վերարկուն հանեց^ք, շեկի գր-
քույկը վերցրեց, մի շեկ գրեց և տարավ, որ միատր Ուայլին
ստորագրի:

Չեկն ինձ համար էր: Դա տասներեք գոլլարի չեկ էր:

— Ահա ձեր չեկը, Զո՛ւ, — ասաց միսիս Հիլպլին: — Ես
փորձեցի նրան համոզել, որ տասնհինգ տա ձեզ, բայց նա
ասաց, որ դուք ձեզ ամբարտավան եք պահել:

— Նա ձեզ նորից ծառայությա՞ն ընդունեց, — հարցրի ես:

— Այո:

— Միսիս Հիլպլի, — ասացի, — ես շատ ուրախ եմ, որ
դուք նորից ստացաք ձեր տեղը: Բայց նա ինչպե՞ս ասաց,
ես ինձ ինչպես եմ պահե՞լ:

— Ամբարտավան, — կրկնեց միսիս Հիլպլին:

— Դա ի՞նչ է նշանակում, — հարցրի ես:

— Անբարեկիրթ:

— Դա միշտ չէ՛, — ասացի: — Որտեղ ես ծնվել եմ, այն-
տեղ մարդիկ պարկեշտ են: Ինչպե՞ս է նա համարձակվում
ինձ անբարեկիրթ կոչել:

Ես մտա միատր Ուայլի առանձնասենյակը և ասացի:

— Միատր Ուայլի, ինչպե՞ս եք համարձակվում դուք ինձ
կոչել անբարեկիրթ:

— Այդ ի՞նչ եք դուրս տալիս, — ասաց նա:

Ես գրասենյակից դուրս ելիս և լիֆտ կանչեցի: Լիֆտը վարում էր հուլյն Զորջը:

— Այդ ո՞ւր,— հարցրեց նա:

— Պորալանդ,— ասացի:

— Պորալանդ: Այդ ի՞նչ գործով:

— Զգիտեմ, հենց այնպես:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց նա:

— Որոշեցի ծառայութունս թողնել:

— Այդպես հանկա՞րժ, ինչո՞ւ:

— Ինձ դուր չի գալիս այս ծառայութունը,— ասացի:— Էլ չեմ ուզում ննջեցյալներ որսալ:

— Դուք գովել եք:

— Ամենևին:

Լիֆտից դուրս եկա, իջա փողոց, սկսեցի քայլել Մարկետ-սթրիտով: Ինքս էլ չգիտեմ ինչպես պատահեց, հանկարծ ընկա «Հարլեյ-Դեվիդսոն»-ի խանութը, և ինձ ցույց տվին մի նոր մոդել: Վաճառողին հարցրի, թե չի՞ կարելի մի կես ժամով մեքենան վերցնեմ փորձելու: Նա խոսեց գրասենյակում ինչ-որ մեկի հետ և ասաց, որ կարելի է, եթե ես մի քիչ փող թողնեմ: Համենայն դեպս, ասաց նա:

Դե, իմ ձեռքին էլ չեկ կար, այնպես որ այդ չեկը տվի նրան:

Հիանալի մեքենա էր: Ես ետ սկսեցա Մարկետ-սթրիտով և կանգ առա հենց այն շենքի առաջ, որտեղ դեռ երեկ աշխատում էի: Բարձրացա վերև և մտա միջոտք Ուայլի առանձնասենյակը:

Նա զարմացավ:

— Միստր Ուայլի,— ասացի,— այնտեղ, ներքևում ես մի սրահի չեի «Հարլեյ-Դեվիդսոն» ունեմ: Եթե ցանկանաք ինձ հետ զրոսնել, ես երջանիկ կլինեմ ձեզ նստեցնելու իմ հետևը: Թամբը շատ մեծ է, և եթե ես մի քիչ սեղմվեմ, ձեզ համար միանգամայն հարմար տեղ կբացվի:

— Ոչ մի տեսակ մոտոցիկլետով զրոսնել ես չեմ ուզում,— ասաց միստր Ուայլին:

տեղեր, և երևի այդպէս էլ կանեի, եթէ ուղեւայի ծառայութեան մեջ մնալ: Բայց այնտեղ, որտեղ ես ծնվել եմ, ոչ մի տղամարդ իրեն թույլ չի տա ծառայութեան մեջ մնալ և իր համար «Հարլեյ-Դեվիդսոն» գնել, եթէ նրա պատճառով հեռացնում են մի ուրիշին, որն աշխատանքի ավելի մեծ կարիք ունի:

— Այդ ի՞նչ բան է «Հարլեյ-Դեվիդսոն»-ը, — հարցրեց միստր Ուայլին:

— Մոտոցիկլետ, — ասացի ես:

— Ա՛յ թե ինչ, — ասաց նա:

— Եվ խնդրում եմ, միսիս Հիլպլի, չկարծեք, թե ես չեմ կարող տեղավորվել ինչպէս հարկն է, — ասացի ես: — Կտեղավորվեմ, մի՛ անհանգստացեք:

— Իսկ ձեր ինչի՞ն է պետք մոտոցիկլետը, — հարցրեց միստր Ուայլին:

— Քշելու համար, — ասացի:

— Իսկ ինչի՞:

— Ման գալու, ճամփորդելու համար:

— Դա ճամփորդելու հղանակ չէ, — ասաց միստր Ուայլին:

— Ամենալավ հղանակներից մեկն է, — ասացի ես: — Դուք երեւի երբեք չեք փորձել ճամփորդել մոտոցիկլետով:

— Ոչ, չեմ փորձել, — ասաց նա:

— Դա աննման բան է, — ասացի: — Կավ մոտոցիկլետը ժամում ութսուն մղոն է կտրում, էլ ի՞նչ է հարկավոր: Միսիս Հիլպլի, — ասացի, — եթե ես երբեք մոտոցիկլետ ձեռք բերեմ իր սալակով, երջանիկ կլինեմ հրավիրել ձեզ զբոսնելու «Սսկե դարբաս» պուրակում, հենց միայն նրա համար, որ դուք պատկերացում ունենաք, թե ինչ հիանալի բան է մոտոցիկլետը քչելը:

— Շատ շնորհակալ եմ, Զո՛ւ, — ասաց միսիս Հիլպլին:

— Յտեսություն, — ասացի ես:

— Յտեսություն, — ասաց միսիս Հիլպլին:

— Յտեսություն, — ասաց միստր Ուայլին:

գնալ և կամ ավելի արագ, քան ամենաարագընթաց ավտոմոբիլը ավտոուղու վրա: Գրագ ևմ գալիս, որ խճուղու վրա ես առնվազն վաթսուն միլիոնատերերից առաջ տնցա: Ես կարողանում էի մեքենային ստիպել, որ փնչացնի: Կարողանում էի գնալ դիզելագներով: Կարողանում էի շուտ գալ մի կողմի վրա թեքվելով: Ես կարծեմ որ շատ ու շատ մարդկանց վախեցրի ավտոուղու վրա: Մի ամբողջ մզոն քշեցի առանց ղեկը բռնելու: Հետո քշում էի թամբի վրա կանգնած և ղեկից բռնած: Մարդկանց թվում է, թե այդպես վտանգավոր է, բայց դա դատարկ բան է: Հարկավոր է միայն իմանալ, թե ինչպես անել այդ:

Ես հիանալի ժամանակ անցկացրի այդ «Հարլեյ-Գեվիդսոն»-ով: Հետո վերադարձա խանութի բակը:

— Այդ որտե՞ղ էիք դուք, — հարցրեց վաճառողը:

— Գնացել էի Մոնտերեյ, — ասացի:

— Մոնտերեյ՞, — ասաց նա: — Իսկ մենք չգիտեինք, որ դուք ուզում եք այդքան հեռու գնալ: Մենք կարծում էինք, թե դուք պարզապես ուզում եք փորձել մեքենայի ընթացքը:

— Գիտե՞ք ինչ, — ասացի, — ես վաղուց ցանկանում էի այնտեղ գնալ: Կարո՞ղ եմ ետ ստանալ իմ փողը:

— Իսկ դուք այդ մեքենան չե՞ք վերցնում:

— Որքա՞ն արժե, — հարցրի ես:

— Երկու հարյուր յոթանասուն հինգ դոլլար:

— Ոչ, — ասացի, — մոտոս այդքան փող չկա:

— Իսկ որքա՞ն կլինի:

— Հենց այն չեկն է, որ տվել եմ ձեզ, էլ չկա, — ասացի: — Այնտեղ տասներեք դոլլար է:

— Մենք կարծում էինք դուք մոտոցիկլետը կգնեք, — ասաց նա:

— Անպայման կգնեի, եթե ծառայությունս թողած չլինեի, — ասացի: — Կարո՞ղ եմ իմ փողը ետ ստանալ:

— Չեմ կարծում, — ասաց վաճառողը: — Ես դիրեկտորին կհարցնեմ:

Նա գնաց գրասենյակ, խոսեց, իսկ հետո վերադարձավ:

— Իսկ ես կարծում էի գուցե հանկարծ կուզենաք,—
ասացի:

Ես դուրս եկա առանձնամենյակից, բայց և իսկույն ես
դարձա:

— Բայց գուցե ձեզ համար հետաքրքիր կլինի զոնե տես-
նե՞լ մեքենան:

— Ոչ:

— Դե, ինչպես կուզեք:

Ես ցած իջա, նստեցի մոտոցիկլետը և բռնեցի: Ա՛յ թե մե-
քենա էր: Մոտորը հիանալի էր աշխատում: Մովափին ես
դուրս եկա ավտոուղի, հիշեցի Մոնտերեյը և մտածեցի,
ամբողջ թափով բաց շթողնե՞մ այս խճուղով, չհասնե՞մ Մոն-
տերեյ և վերադառնամ, իսկ հետո արդեն կարելի է մոտոցիկ-
լետը հանձնել խանութ և սկսել մի ուրիշ աշխատանք որո-
նել: Գուցե փողի մի մասը կվերագարձենե՞ն ինձ, գուցե և ոչ,
բայց եթե նույնիսկ չվերագարձենե՞ն, միևնույն է, արժե այդ-
պես անել: Եվ մեքենան բաց թողի ամբողջ թափով:

Ա՛յ թե զրոսանք էր հա՛: Ապրիլ ամիս: «Հարկեյ-Դեվիդ-
սոն»-ը իմ տակը, խաղաղ օվկիանոսը բոլորովին մոտիկ:
Ամբողջ աշխարհը: Եվ քաղաքներ: Եվ դյուղեր: Եվ ես մի
ակնթարթ գորգոցով անցա Մոնտերեյով:

Դա մի սքանչելի քաղաք էր: Մի քանի հին շենք, նավեր:
Ձկնորսական նավեր: Ձկան բուրմուռն ուղղակի հիանալի
էր: Առատ արեւ: Ձկնորսներն իրար ձայն էին տալիս իտա-
լերեն: Ես «Հարկեյ-Դեվիդսոնով» սլացա ամբողջ քաղաքի
միջով, դուրս եկա ուղիղ ծովափի խոնավ ավազի վրա և մի
քիչ էլ բռնեցի հենց ափի եզրով: Մովորորներին մի երամ փախ-
ցրի, կանգ առա կաֆեի մոտ, երեք շնիցեյ կերա և երկու բա-
ժակ սուրճ խմեցի:

Իսկ հետո ես դարձա դեպի Ֆրիսկո:

Հիանալի զրոսանք էր դա՝ և՛ գալս, և՛ վերադարձ: Մեքե-
նան ամենահրեկելին էր իմ տեսածների մեջ: Նրանով ես կա-
րող էի անել ամեն բան, ինչ ուզենայի: Կարող էի բռնել ուղա-
ծըս տեղը, կարող էի ստիպել հետիոտն մարդուց էլ դանդաղ

հետն էլ մի մարդ: Այդ մյուսը շատ հպարտ ու բարկացկոտ
ասք ուներ:

— Ձեմ հասկանում, ի՞նչ եք նկատի ունեցել դուք,—
ասաց նա,— որ մեքենան վերցրել ու գնացել եք Մոնտերեյ:

— Ի՞նչ,— հարցրի:

Ես չգիտեի ինչ ասեմ: Նա ի՞նքն ինչ նկատի ուներ, երբ
ինձ հարցնում էր, թե ես ինչ եմ նկատի ունեցել: Ես ոչինչ
էլ նկատի չեմ ունեցել:

— Այդպես անել չի կարելի,— ասաց նա:— Մենք կար-
ծում էինք դուք ուզում եք շրջել մի թաղամաս կամ որևէ մե-
կին ցույց տալ մեքենան:

— Ես հենց ոմանց էլ ցույց եմ տվել այն,— ասացի:—
Կարո՞ղ եմ ետ ստանալ իմ փողը:

— Վախենում եմ, որ դեռ մի բան էլ դուք պիտի վճա-
րեք,— ասաց դիրեկտորը:— Դա նոր մեքենա է: Վաճառքի
համար: Իսկ հիմա արդեն դարձել է հնամաշ:

— Գուցե և այդպես է,— ասացի:— Գոնե փողի մի մասը
կվերադարձնե՞ք:

— Ոչ,— ասաց դիրեկտորը:

— Փառավոր մոտոցիկլետ է,— ասացի ես:

Դուրս եկա խանութից և ուղղվեցի տուն, իմ սենյակը,
նույնիսկ չմտածելով, թե հիմա որտեղ պիտի աշխատանք
գտնեմ: Ախր շատ երջանիկ էի զգում ինձ Մոնտերեյ կատա-
րած այդ ճամփորդությունից ու վերադարձից հետո: